«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ - «Քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները»

Առարկան՝ ՀԵՊ

Հետազոտող ուսուցիչ՝ Ա. Վարդանյան

Ուսումնական հաստատություն՝ Ն. Սասնաշենի Հ. Հովհաննիսյանի անվան միջն. դպրոցի

Երևան 2022

Ներածություն

Որպես Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ մենք համոզված ենք, որ այսօր ինչքան մեծ տեղաշարժեր են տեղի ունենում, ինչքան տարածքներ ենք կորցնում, կորուստներ ենք ունենում, սակայն համոզված ենք եթե չլինեինք Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ, ապա կարող էին մեզանից խլել մեր ինքնությունը, հավատքն է պահում ժողովրդին, ստիպված ենք եղել հատված-հատված բաժանվել, սակայն մենք կարող ենք ասել մեզ պահել է մեր եկեղեցին: Աշխարհում առաջին քրիստոնյա երկիրը լինելով՝ ինչքան էլ թուլացանք, սակայն մնացինք արդիական, ժամանակի հետ համաքայլ:

Պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով և արարումներով լի պատմություն ու մշակույթ:

Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը վերստին նվաճված իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու զորեղացնելու անսասան վճռականությամբ:

Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց եկեղեցու պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն:

Հայոց եկեղեցու պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդիկյանքին, գիտությանը, մշակույթին:

Քրիստունեական եկեղեցու առաջին մեծ բաժանումը տեղի է ունեցել 451թ-ի Քաղկեդոնի տիեզերական ժողովից հետո: Երկրորդ մեծ բաժանումը տեղի է ունեցել 1054թ-ին, երբ քաղկեդոնական ուղղությունը բաժանվեց երկու մասի, ևառաջացան բյուզանդական օրթոդոքս ու լատին կաթոլիկ եկեղեցիները:

Քրիստոնեական ազգային արժեհամակարգը հայ ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը:

Հայոց եկեղեցին քրիստոնեական- ազգային արժեքային նոր համակարգի ձևավորման ժամանակ պահպանեց էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած, հայկականությանը բնորոշ հատկանիշները:

Հայ հասարակության համար արժեքների, խորհրդանիշների, գաղափարներիկ մշակման կենտրոն դարձավ Ս. Էջմիածինը:

Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ լինելով՝ մեզ հնարավորություն է ընձեռվում իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Հայոց եկեղեցու պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները,փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացմում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

Բուն բովանդակություն

Արևելյան հնագույն եկեղեցիները, քրիստոնյա Արևելքում կազմավորված ազգային եկեղեցիները, որոնք, մերժելով Քաղկեդոնի ժողովը, կազմել են Ընդհանրական եկեղեցու Արևելյան ուղղափառ ընտանիքը: Արևելյան Հնագույն Ուղղափառ Եկեղեցիներն իրենց դավանանքով հետևորդներն են Ալեքսանդրիայի քրիստոսաբանության և աստվածաբանության, որոնք հաղթանակել և ուղղափառ են ճանաչվել առաջին երեք տիեզերական ժողովներում:

Ընդունելով միայն երեք տիեզերական ժողովների դավանանքային վճիռները՝ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները գտնում են, որ Նիկիայի Ա (325), Կ. Պոլսի Բ (381), Եփեսոսի Գ (431) տիեզերաժողովները բանաձևել են քրիստոնեական կրոնի և հավատի հիմնական սկզբունքները, այն է՝ Որդու Աստվածությունը, Սուրբ Երրորդության, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները: Հետագայի նորամուծությունները նրանք համարում են ալեքսանդրյան աստվածաբանական ավանդությանը հակասող: Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, դավանելով միաբնակությունը(մոնոֆիզիտիզմ),մերժումեն եվտիքեսությունը (մոնոֆի զիտիզմ) նեստորական և քաղկեդոնական երկաբնակությունը(դիոֆիզիտիզմ), կանգնել են դավանական այն սկզբունքների վրա, որոնք ավանդվել են Աստվածաշնչով, երեք տիեզերական ժողովներով և եկեղեցու հայրերի ուսուցումներով:

Արևելյան հնագույն եկեղեցիներն են՝

- Հայաստանյայց առաքելական եկեղեցին,
- Ասորական ուղղափառ եկեղեցին,
- Ղպտի ուղղափառ եկեղեցին,
- Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցին,
- Մալանկարա ուղղափառ ասորական եկեղեցին,
- Էրիթրեական ուղղափառ միաբնակ եկեղեցին:

Հայ Առաքելական Եկեղեցի

Հայ Առաքելական Եկեղեցի (նաև՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Հայաստանյայց եկեղեցի, Հայ եկեղեցի, Հայոց եկեղեցի), աշխարհի հնագույն քրիստոնեական ազգային եկեղեցիներից մեկը, որ պատկանում է Արևելյան ուղղափառ ոչ քաղկեդոնական եկեղեցիների խմբին: Հոգևոր առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որի գլխավոր նստավայրն է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում գտնվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանքը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեկ ամբողջական միություն է, որի բարձրագույն հոգևոր պետը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Կաթողիկոսական

նստավայրը Սուրբ Էջմիածինն է: Հայ Եկեղեցին ունի նվիրապետական չորս աթոռներ կամ կենտրոններ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն,Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսությունը, որ հայտնի է որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսություն, գլուխն ու ղեկավարն է ընդհանուր նվիրապետության: Մյուս երեք աթոռների նկատմամբ այն նախամեծար է ու նախաթոռ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատվում է որպես հաջորդն ու ժառանգորդը Թադևոս ու

Բարդուղիմեոս առաքյալների և Գրիգոր Լուսավորչի:

Բացի նվիրապետական այս չորս աթոռներից աշխարհի մի շարք երկրներում գործում են եկեղեցական կառույցներ, որոնք կոչվում են թեմեր և ունեն իրենց թեմակալ առաջնորդները: Թեմերի մեծագույն մասը, ինչպես օրինակ ԱՄՆ-ում,Ֆրանսիայում, Գերմանիայում,

Ռումինիայում, Բուլղարիայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ավստրալիայում և այլուր, գործում են Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո: Կիպրոսի, Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական թեմերը գտնվում են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության (նստավայրը Անթիլիաս) հովանու ներքո:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության վաղ շրջանի մասին պահպանված պատմական սկզբնաղբյուրները փոքրաթիվ են (Ագաթանգեղոս, Մ. Խորենացի, ասորական, հունական որոշ աղբյուրներ), սակայն առկա տեղեկություններն էլ բավարար են պատմական եղելությունների ամբողջական պատկեր ստանալու համար: Ավանդաբար Հայ Եկեղեցին կոչվում է Առաքելական,

քանի որ Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչները եղել են Հիսուս Քրիստոսի* 12 աշակերտներից Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, ովքեր անվանվում ենՀայաստանի առաջին լուսավորիչներ:

Առաքելական ժամանակներից մինչև 3-րդ դարի վերջը քրիստոնեությունը աստիճանաբար տարածվել է Հայաստանի մեջ: Դրա համար մեծ նպաստող ուժեր էին ոչ միայն Քրիստոսի առաքյալների քարոզչությունը, այլև ստեղծված օգտակար մի շարք գործոնները:Առաջին դարում քրիստոնեությունը լայնորեն տարածված էր Հայաստանի հարևան Կապադովկիայում (սրա մաս էր կազմում Փոքր Հայքը) Օսրոենեում և Ադիաբենեում, որոնց հետ առկա առևտրային և մշակութային կապը հարմար պայմաններ էին ստեղծում քրիստոնեության ներթափանցման համար: Նպաստող հանգամանք էր նաև Տիգրանակերտում,Արտաշատում,Վաղարշապատում և Զարեհավանում հրեական համայնքների գոյությունը. քրիստոնեության առաջին քարոզիչները իրենց գործունեությունը սկսում էին հենց այդ համայնքներից:

197թ. Տերտուղիանոսը «Ընդդեմ Հրեաների» գրքում քրիստոնեությունը ընդունած ազգությունների շարքում նշում է նաև հայերին: Այս տեղեկությունը հաստատում է նաև Օգոստինոս Երանելին «Ընդդեմ մանիքեականների» աշխատության մեջ:

---

*Իջավ Միածին Որդին:Ըստ Ագաթանգեղոսի Տրդատ 3-րդ արքան և Գրիգոր Լուսավորիչը Միածնի իջման վայրում սկսում են կառուցել եկեղեցի:303թ-ին տեղի ունեցավ բացման և օծման հանդիսավոր արարողությունը:

Քրիստոնեության արագ տարածումը փաստող վկայություններ են նաև Վաղարշ Բ (186-196 թթ), Խոսրով Ա (196-216 թթ) և հաջորդ արքաների հալածնքները ընդդեմ քրիստոնյաների: Սրանց մասին նկարագրություններ են առկա Կապադովկիայի Փիրմիլիանոս եպիսկոպոսի (230-268 թթ) «Եկեղեցու հալածանքների պատմությունը» գրքում: Եկեղեցական պատմության հայր Եվսեբիոս Կեսարացին հիշատակում է նաև ապաշխարողական մի նամակ՝ «ուղղված Հայաստանի քրիստոնյաներին, որոնց եպիսկոպոսն է Մերուժանը»: Այս նամակի հեղինակը ըստ Եվսեբիոսի 3-րդ դարի Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դիոնիսիոսն էր: Համաձայն պատմական մի քանի տեղեկությունների՝ առաքելական քարոզչությունից հետո հայաստանում հիմնվում ենեպիսկոպոսական մի քանի աթոռներ (Գողթն, Արտազ կամ Աշտիշատ):

301 թ.-ին Հայոց Տրդատ Գ Մեծ (287-330 թթ) արքայի օրոք և Գրիգոր Ա Պարթև Լուսավորչի (302-326) ջանքերով քրիստոնեությունը Հայաստանումհռչակվեց պետական կրոն: Այդ թվականը համարվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հիմնադրման տարեթիվը:

Քրիստոնեության պետական հռչակման և հայոց դարձի պատմությունը մեզ փոխանցում են 5-րդ դարի պատմիչներ Ագաթանգեղոսը և մասամբ Մովսես Խորենացին ու Փավստոս Բուզանդը: Համաձայն պատմիչների՝ Սուրեն Պարթևը, որ հետագայում անվանվեց Գրիգոր Լուսավորիչ, որդին էր Տրդատ Մեծիհորը՝ Խոսրով արքային դավադրաբար սպանած Անակ Պարթևի: 287 թ., երբ Տրդատը հռոմեական զորքերի ուղեկցությամբ Հայաստան է գալիս հոր գահը վերադարձնելու՝ նրան է միանում նաև երիտասարդ Գրիգորը՝ դառնալով արքայի հավատարիմ զինակիցը:

Պարսկաստանի դեմ տարած հաղթանակից հետո, սակայն, Տրդատ արքան առաջարկում է Գրիգորին ընծա մատուցել Անահիտ* դիցուհուն: Գրիգորը, ով Կեսարիայում քրիստոնեական կրթություն էր ստացել, հրաժարվում է կուռքին զոհ մատուցել, ինչի համար արքան հրամայում է ենթարկել նրան 12 տեսակի տանջանքի: Իմանալով նաև, որ Գրիգորը Խոսրով թագավորին սպանած Անակի որդին է, Տրդատը պատվիրում է նրան գցել Արտաշատի զնդանը (խոր վիրապը), ուր Գրիգորը հրաշքով ապրում է 13/14 տարի: Գրիգորին բանտարկելուց հետո Տրդատ Մեծը հրովարտակով կոչ է անում հպատակներին հավատարիմ մնալ հեթանոսական կրոնին և մահապատիժ է սահմանում քրիստոնյաների համար: Դեպքերից մի քանի տարի անց Տրդատ արքան որսի ժամանակ հիվանդանում է խոզակերպ հիվանդությամբ. Ագաթանգեղոսը գրում է. «Տրդատը սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել և բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքայի նման մարդկային բնությունից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը, գնաց նրանց մեջ բնակվելու»:Տրդատի հիվանդության պատճառը Հռոմի Դիոկղետիանոս կայսեր ձեռքից փախած 33 Հռիփսիմյանց կույսերի և հատկապես նրանցից ամենագեղեցիկի՝ Հռիփսիմեի սպանությունն էր: Վերջինս քարկոծվելով սպանվել էր՝ արքայի հետ ամուսնանալու առաջարկը մերժելու համար:

Շուտով Տրդատի քույրը՝ Խոսրովիդուխտը, երազ է տեսնում, որ արքային կարող

---

*Հիսուս թարգմանաբար նշանակում է փրկիչ, Քրիստոս՝ Օծյալ

է բուժում պարգևել զնդանում գտնվող Գրիգորը, որին վիրապից հանելով բերում են Վաղարշապատ: Արքունիքը մեծ պատվով է դիմավորում Գրիգորին: Վերջինս նախ հողին է հանձնում նահատակ կույսերի աճյունները, ապա 5-օրյա պահք է սահմանում (Առաջավորաց պահք) և աղոթքով ապաքինում արքային: Այնուհետև Գրիգորը 66 օր արքունիքին ու ժողովրդին քարոզում է Հին ու Նոր կտակարանը և քարոզության վերջին օրը տեսիլքով նրան ցույց է տրվում Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման վայրը: Ապա Գրիգորը Տրդատի գործակցությամբ շրջում է Հայոց աշխարհում, քրիստոնեություն է քարոզում, քանդում է հեթանոսական հուշարձանները և նոր քրիստոնեականն է կառուցում դրանց տեղերում:

Հետագայում Տրդատ Մեծը ավագանու որոշմամբ Գրիգոր Լուսավորչին ուղարկում է Կեսարիա՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Կեսարիայից վերադառնալուց հետո նորընտիր կաթողիկոսը Արածանի գետում մկրտում է Տրդատ թագավորին և արքունիքին, ապա Տրդատ Գ մեծի հետ ձեռնամուխ է լինում Էջմիածնի Մայր Տաճարի կառուցմանը: Տրդատ Գ Մեծի հրովարտակով քրիստոնեությունը հռչակվում է Մեծ Հայքի պետական կրոն:

Գրիգոր Լուսավորչին** կաթողիկոսական պաշտոնում փոխարինում է որդին՝ Արիստակես հայրապետը, ով եպիսկոպոս լինելով՝ 325 թ. որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ մասնակցել էր նաև Նիկիայի Առաջին Տիեզերաժողովին՝ իր հետ բերելով ժողովի կանոններն ու հավատո հանգանակը: Հեթանոս իշխանների դեմ պայքարելու արդյունքում Արիստակեսը դավադրաբար սպանվում է: Նույն բախտին են արժանանում նաև նրա եղբայրը՝ հաջորդ հայրապետը՝ Վրթանեսը, և վերջինիս որդին՝ Հուսիկ Ա հայրապետը:

Հուսիկ կաթողիկոսի թոռի՝ Ներսես Ա Մեծի կաթողիկոսության շրջանը նշանավորվեց Հայոց Եկեղեցու բարենորոգչությամբ. 354 թ. Աշտիշատում գումարվեց Հայոց Եկեղեցու առաջին ազգային եկեղեցական ժողովը, որի ժամանակ ընդունվեցին, ապա կյանքի կոչվեցին դավանաբանական, կազմակերպչական, բարեսիրական ուղղվածության մի շարք որոշումներ: Այս ժողովի ընթացքում ևս մեկ անգամ մերժվեց ու նզովվեց արիոսականությունը: Հայոց Եկեղեցու ոսկեդարը մեկնարկեց 5-րդ դարի սկզբով, երբ Ներսես Մեծի որդու՝Սահակ Ա Պարթև կաթողիկոսի, Մեսրոպ Մաշտոց վարդապետի ջանքերով և Վռամշապուհ թագավորի հովանավորությամբ ստեղծվեցին հայոց գրերը: Գրերի գյուտը հզոր զենք դարձավ Հայոց եկեղեցու և պետականության պահպանման համար, ինչպես նաև խթան հանդիսացավ եկեղեցական-ծիսական, գրական, մշակութային կյանքի հարստացման ու աշխուժացման համար: Սահակ կաթողիկոսից հետո վերջնականապես դադարեց կաթողիկոսական գահի՝ Լուսավորչի տոհմին պատկանելը: 5-րդ դարի երկրորդ կեսին զրադաշտական Սասանյան Պարսկաստանի կրոնական ձուլման քաղաքականության դեմ ժողովրդական ընդվզումը վերաճեց Վարդանանց և Վահանանց պատերազմների, որոնց ժամանակ

---

* Անահիտ-- Մայր-աստվածուհի,բերրիության խորհրդանիշ

** Պարթև Անակի որդին, հայոց առաջին հայրապետ(կաթողիկոս)

իր ազգանվեր ծառայությունն է մատուցել նաև Հայ Առաքելական եկեղեցին: Արդյունքում երկու կաթողիկոսներ՝ Հովսեփ Հողոցմեցին (440-452) և Գյուտ Արահեզացին (461-479) հալածվեցին Պարսից կառավարության կողմից: Հարաբերական խաղաղություն հաստատվեց Հովհան Ա Մանդակունի (479-490) և Բաբկեն Ա Ոթմսեցի (490-516) կաթողիկոսների օրոք: 506 թ. Բաբկեն կաթողիկոսը հրավիրեց Դվինի Ա եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին նաև Հայոց Եկեղեցու վերագահությունն ընդունող Վրաց և Աղվանից եկեղեցիները: Դվինի ժողովում առաջին անգամ քննության առնվեց 451 թ. գումարված Քաղկեդոնի 4-րդ Տիեզերաժողովը և դրա ընթացքում քննարկված հարցերն ու ընդունած քրիստոսաբանական բանաձևը (Ավարայրի ճակատամարտի և անկայուն քաղաքական դրության պատճառով ժողովին Հայաստանից ներկայացուցիչ չէր մասնակցել): Դվինի ժողովը հիմնովին մերժել է Քաղկեդոնի որոշումները՝ դրանք համարելով առաջին երեք Տիեզերաժողովների որոշումներին հակասող: Քաղկեդոնի ժողովը որպես ներքին նպատակ ուներ նաև մեծացնել Բյուզանդիայի ազդեցությունը արևելքի Քրիստոնյա ժողովուրդների վրա, զրկել նրանց մշակութային և դավանաբանական ինքնուրույնությունից: 554 թ. Դվինում գումարվեց 2-րդ ժողովը, որը ևս մեկ անգամ բացեիբաց նզովեց Քաղկեդոնի* ժողովը և խզեց հարաբերությունը Բյուզանդական եկեղեցու հետ: Պապ թագավորի ժամանակ ձեռք բերած վարչական անկախությունից հետո 6-րդ դարում Հայոց եկեղեցին վերջնականապես դավանապես զատվեց բյուզանդական եկեղեցուց՝ ընդունելով միայն առաջին 3 տիեզերական ժողովները: Այսուամենայնիվ Բյուզանդիան (հատկապես Հայաստանի՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև 2-րդ բաժանումից հետո) չէր դադարում ձուլման քաղաքականություն տանել: Մորիկ կայսեր վարած քաղաքականության արդյունքում 608 թ. Վրաց եկեղեցին բաժանվեց Հայոց Եկեղեցուց՝ ընդունելով քաղկեդոնականությունը:

Հայաստանը քաղկեդոնականացնելու և Հայոց Եկեղեցուն մոնոֆիզիտություն պարտադրելուն ուղղված ջանքեր էին ներդնում նաև Հերակլ, ապա Կոստանդ Բ կայսրերը, սակայն քաղաքական պատեհությամբ պայմանավորված՝ միավորման որոշումները այդպես էլ կյանքի չեն կոչվում: Դրան մեծ արգելք են հանդիսանում նոր թափ ստացած արաբական արշավանքները:

7-րդ դարի սկիզբը վտանգավոր էր Հայ ժողովրդի և եկեղեցու համար ոչ միայն Բյուզանդիայի դավանական ճնշումների պատճառով, այլ նաև Պարսկական պետության անկման: Ծուրջ 2 տասնամյակ Հայաստանը արաբա-բյուզանդական պատերազմների թատերաբեմ էր:

9-րդ դարի 2-րդ կեսին՝ Զաքարիա Ա Զագեցի (855-876 թթ.) և Գևորգ Բ Գառնեցի (877-897 թթ.) կաթողիկոսների օրոք Բագրատունիների գլխավորությամբ թոթափվեց արաբական լուծը՝ վերականգվելով պետության և Եկեղեցու անկախությունը: Այսուհանդերձ արաբական ճնշումները Հայոց եկեղեցու և կաթողիկոսության վրա շարունակվում էին. այսպես՝ գերության մեջ է հայտնվում

---

*Կոստանդնուպոլսին մերձակա բնակավայր

Գևորգ Գառնեցի կաթողիկոսը, հալածվում և նեղություններ է կրում Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ կաթողիկոսը (898-929): Արաբական գերիշխանության աստիճանական անկմանը զուգահեռ դարձյալ մեծանում է Հայոց Եկեղեցին դավանական կախվածության մեջ գցելու Բյուզանդիայի հավակնությունը:

Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը առաջարկում է միավորել 2 եկեղեցիները: Այս առաջարկի առթիվ 862 թ. Շիրակավանում ժողով է գումարվում, որը մերժում է քաղկեդոնականների այս առաջարկները: Բյուզանդիան այնուհետ ձեռնամուխ է լինում Հայոց Եկեղեցու մեջ պառակտում մտցնելուն և սկսում է հալածել հայ հոգևորականներին: Առաջ են գալիս մի շարք հակաթոռ կաթողիկոսություններ, անընդհատ տեղափոխվում է կաթողիկոսական նստավայրը: Այսքանով հանդերձ 10-րդ դարի վերջը և 11-րդ դարիսկիզբը Անիի թագավորության համար նշանավորվում են հոգևոր-մշակութային կյանքի վերելքով. հիմնվում են դպրոցներ, մատենադարաններ, մեծաքանակ եկեղեցիներ և վանքեր (Կամրջաձոր, Դպրեվանք, Հոռոմոս, Սանահին, Հաղպատ), ի հայտ են գալիս եկեղեցական ակնառու դեմքեր (Հովհաննես Կոզեռն, Ստեփանոս Ասողիկ, Սարգիս Անեցի, Անանիա Սանահնեցի, Արիստակես Լաստիվերցի, Հովհաննես Սարկավագ Վարդապետ): 1019 թ. Հայոց կաթողիկոս է նշանակվում Պետրոս Ա Գետադարձը* (1019-1058 թթ.), որի օրոք սկիզբ է առնում Բագրատունյաց պետության ճգնաժամը: Իր ծրագրերը և հույսերը կապելով Բյուզանդիայի հետ՝ կաթողիկոսը անկման է տանում նաև Հայոց Եկեղեցին: 1045 թ. Բյուզանդիայի վարած քաղաքականության, պետության և եկեղեցու անհեռատես քայլերի արդյունքում Բագրատունյաց թագավորությունը փլուզվում է: Աննախադեպ հալածանքներ են սկսվում Հայ Եկեղեցու դեմ, բանտարկվում և տանջանքների է ենթարկվում Պետրոս Գետադարձին հաջորդած Խաչիկ Բ Անեցի (1058-1065) կաթողիկոսը, որի մահից հետո Բյուզանդիան միաժամանակ արգելում է Հայ Եկեղեցուն կաթողիկոս ընտրել:

Ստեղծված ծայրահեղ վիճակում 11-րդ դարի վերջում կաթողիկոսական Աթոռը տեղափոխվում է ավելի անվտանգ վայր՝ Կիլիկիա:

Հայոց Եկեղեցին Կիլիկիայի տարածքում գոյատևեց 1062-1441 թթ: Այսուամենայնիվ բուն Հայաստանում ևս չկորսվեց հայ հոգևոր կյանքը:

12-14-րդ դարերում Հայոց եկեղեցին առաջին անգամ սերտ հարաբերությունների մեջ մտավ Հռոմեականթոլիկ եկեղեցու հետ: Այս փոխհարաբերությունը մեծապես կապված էին Կիլիկիայի տարածքում և հարակից շրջաններում խաչակրաց արշավանքների արդյունքում ձևավորված արևմտյան մի շարք նախարարությունների ձևավորմամբ, Կիլիկյան թագավորության քաղաքական և տնտեսական անկայուն դրությամբ: Ցանկանալով ստանալ Արևմուտքի՝ հետևաբար և Հռոմեական եկեղեցու օժանդակությունը՝ որոշ հայ քաղաքական և հոգևոր գործիչներ՝ պատրաստ էին գնալ զիջումների անգամ հոգևոր-դավանաբանական հարցերում: Այս հաշվի առնելով Կաթոլիկ եկեղեցին այդ դարերի ընթացքում մշտապես առաջ էր քաշում եկեղեցիների ունիայի (միավորման) խնդիրը՝ հիմնականում պնդելով 2 դավանական զիջում՝

- Հաղորդության գինուն ջուր խառնել
- Սուրբ Ծնունդը հունվարի 6-ի փոխարեն նշել դեկտեմբերի 25-ին:

1375 թ. մամլուքների արշավանքների արդյունքում ի վերջո դադարեց գոյություն ունենալ Կիլիկիայի Հայոց թագավորությունը: Հասունանում էր կաթողիկոսական աթոռը ավելի ապահով վայր՝ բուն Հայաստան տեղափոխելու գաղափարը:

Դեռևս Կիլիկիայի Գրիգոր Թ Մուսաբեկյանց կաթողիկոսի կենդանության օրոք, նրա համաձայնությամբ: 1441 թ. Համբարձման տոնի օրը Թովմա Մեծոփեցու և Հովհան Հերմոնեցու ջանքերով Վաղարշապատում ժողով գումարվեց 700 եպիսկոպոսների մասնակցությամբ, վիճակ գցվեց և Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնն ընկավ Կիրակոս Վիրապեցուն (1441-1443 թթ), ով փաստորեն դարձավ գոյություն ունեցող հայկական բոլոր կաթողիկոսությունների, նվիրապետական աթոռների և թեմերի գլուխը:

19-րդ դարասկիզբը Հայոց եկեղեցու համար առանձնացավ պետական կյանքում տեղի ունեցած բուռն փոփոխություններով. Հայաստանի մի զգալի մասը՝Արևելյան Հայաստանը, ազատվելով Թուրքիա-Պարսկական լծից, ընկավ Ցարական Ռուսաստանի գերիշխանության տակ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին 20-րդ դար ոտնակոխեց Խրիմյան Հայրիկի գահակալությամբ, ում հաջորդեց Կ. Պոլսի պատրիարքՄատթեոս Իզմիրլյանը (1908-1910 թթ.): Իզմիրլյանի հաջորդ Գևորգ Ե Սուրենյանցը (1911-1930 թթ) իր կաթողիկոսության ընթացքում ականատեսն ու ժամանակակիցը եղավ միանգամից պատմական մի քանի իրադարձությունների՝ Առաջին աշխարամարտի ու Հայոց Մեծ Եղեռնի, Սարդարապատի ճակատամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծմանը, Հայաստանի Խորհրդայնացմանը:

1941 թ. սկիզբ առած Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայոց Եկեղեցին իր փոքր հնարավորություններով հանդերձ կանգնեց պետության կողքին՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նախաձեռնությամբ հանգանակություններ և ռազմական ուժ («Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներ) ուղարկելով ռազմաճակատ:

Գարեգին Բ կաթողիկոսի բարձր նախագահությամբ 2001 թ. մեծ շուքով տոնվեց Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակը: Գարեգին Բ կաթողիկոսի ջանքերով կյանքի են կոչվել սոցիալական, բարեգործական, մանուկների ու պատանիների հոգևոր կրթությանը օժանդակող մի շարք ծրագրեր: Ամրացվել և ընդլայնվել են միջեկեղեցական հարաբերությունները: Հայոց Եկեղեցին, այսօր կանգնած հաստատուն հիմքերի վրա, դեպի լույս և փրկություն է առաջնորդում իր հավատավոր հոտին:

---

*Պետրոս կաթողիկոսի կատարած ջրօրհնեքից հետո գետի հոսանքը կանգ առավ, ապա սկսեց հոսել հակառակ ուղղությանմբ:Այտեղից էլ առաջացել է կաթողիկոսի «Գետադարձ» մականունը

Ասորական ուղղափառ եկեղեցի

Ասորական ուղղափառ եկեղեցի որոշ աղբյուրներում կոչվում է նաև Հակոբիկյան եկեղեցի, արևելյան Անտիոքյան ուղղափառ եկեղեցի Լևանտում և Միջագետքում: Պաշտոնապես ներկայացնում է Ասորոց միաբնակ եկեղեցու հավատացյալներին: Մեկն է Արևելյան հնագույն 6 եկեղեցիներից:
Առաջացել է 560—570-ական թվականներին, երբ Ասորոց միաբնակ եկեղեցին ներքին երկպառակությունների հետևանքով երկփեղկվել է: Առաջին մասը, Անտիոքի Պողոս պատրիարքի անունով, կոչվել է Պողոսյան եկեղեցի, երկրորդը՝ Եդեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադեոսի (490—578) անունով՝ Հակոբիկյան եկեղեցի: Առաջինի հետևորդները, եկեղեցու միասնությունը վերականգնելու նպատակով, կողմ էին քաղկեդոնականությանը որոշ զիջումներ անելու, իսկ հակոբիկյաններն անզիջում դիրք էին բռնել: Հակոբիկյան եկեղեցին ունեցել է իր ինքնուրույն պատրիարքը, որի նստավայրը սկզբնական շրջանում Անտիոքն էր: Հետագայում, թեպետ նստավայրը հաճախ է փոխվել, բայց եկեղեցու գլուխը շարունակվել է կոչվել Անտիոքի պատրիարք: Ասորական ուղղափառ եկեղեցին մշտական բարեկամական հարաբերություններ է պահպանել Հայոց եկեղեցու հետ: Այժմ՝ Ասորական ուղղափառ եկեղեցի ներկայացնում է Ասորոց միաբնակ հավատացյալներին:
Հակոբիկյան եկեղեցի անվանումը կտրականապես մերժվում է Ասորական ուղղափառ եկեղեցու կողմից:

1959 թվականից, եկեղեցու աթոռը գտնվում է Դամասկոս քաղաքի Սուրբ Գևորգ մայր տաճարում: Եկեղեցու ղեկավարը կրում է Անտիոքի և Համայն Արևելքի Ասորիների Պատրիարքի տիտղոսը: Ներկայիս ղեկավարը Իգնատիոս Եփրեմ Բ Պատրիարքն է: Ասորական ուղղափառ եկեղեցու հավատացյալների թիվը հասնում է 5,500,000-ի: Նրանք հիմնականում բնակվում են Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Իսրայելում, Թուրքիայի հարավ-արևելքում և Իրանում:
Ասորական ուղղափառ եկեղեցին այժմ ունի հետևյալ 33 թեմերն ու պատրիարքական փոխանորդությունները.

- Սիրիա
  - Դամասկոսի ասորական պատրիարքական թեմ
  - Հոմսի և Համայի ասորական թեմ
  - Հալեպի ասորական թեմ
  - Ջազիրայի և Եփրատի ասորական թեմ
- Լիբանան
  - Բեյրութի ասորական թեմ
  - Լեռնալիբանանի ասորական թեմ
  - Զահլեի և Բեկաայի ասորական պատրիարքական փոխանորդություն
- Իրաք
  - Բաղդադի և Բասրայի ասորական թեմ
  - Մոսուլի և Քրդստանի ասորական թեմ (հիմն. 1792-93)

    - Սուրբ Մատթեոս վանքի ասորական թեմ
- Թուրքիա
    - Մարդինի ասորական թեմ
    - Տուր Աբդինի ասորական թեմ
    - Ադիյամանի ասորական պատրիարքական փոխանորդություն
    - Ստամբուլի ասորական պատրիարքական փոխանորդություն
- Սուրբ Երկիր
    - Երուսաղեմի, Հորդանանի և Համայն Սուրբ Երկրի ասորական պատրիարքական փոխանորդություն
- Հնդկաստան
    - Կնանայայի ասորական թեմ
    - Հակոբիկյան ասորական քրիստոնեական եկեղեցի
- Ամերիկա
    - Արևելյան Ամերիկայի Միացյալ Նահանգների ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1957)
    - Արևմտյան Ամերիկայի Միացյալ Նահանգների ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1957)
    - Կանադայի ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1957)
    - Հյուսիսային Ամերիկայի Մալանկարա ասորական թեմ
    - Արգենտինայի ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1982)
    - Բրազիլիայի ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1982)
    - Կենտրոնական Ամերիկայի, Կարիբյան կղզիների և Վենեսուելայի ասորական թեմ
- Եվրոպա
    - Շվեդիայի և Սկանդինավիայի ասորական թեմ (հիմն. 1978)
    - Շվեդիայի ասորական պատրիարքական փոխանորդություն
    - Բելգիայի և Ֆրանսիայի ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1977)
    - Շվեյցարիայի և Ավստրիայի ասորական պատրիարքական փոխանորդություն
    - Նիդերլանդների ասորական պատրիարքական փոխանորդություն
    - Գերմանիայի ասորական պատրիարքական փոխանորդություն
    - Մեծ Բրիտանիայի ասորական պատրիարքական փոխանորդություն (հիմն. 1987)
- Ավստրալիա
    - Ավստրալիայի և Նոր Զելանդիայի ասորական պատրիարքական փոխանորդություն
- ԱՄԷ
    - Արաբական Միացյալ Էմիրությունների և Պարսից ծոցի արաբական երկրների ասորական պատրիարքական փոխանորդություն

Ղպտի(եգիպտական) եկեղեցի

Ալեքսանդրիայի ղպտիական ուղղափառ եկեղեցի, Եգիպտոսի քրիստոնեական եկեղեցու պաշտոնական անվանումը, արևելյան հնագույն եկեղեցիներից մեկը: Ըստ ավանդության՝ հիմնվել է Մարկոս առաքյալի կողմից Ալեքսանդրիայում: Պատարագի ժամանակ օգտագործվում է ղպտիական ծիսակարգը, պատարագը կատարվում է արաբերեն և ղպտիերեն լեզուներով:

Ղպտի ուղղափառ եկեղեցին հակաքաղկեդոնական եկեղեցի է և ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները, ինչպես և Հայ Առաքելական Եկեղեցին:

Ներկայումս Ղպտի ուղղափառ եկեղեցին ունի 400 համայնք, մեծ մասը Եգիպտոսում, մնացածը՝ եգիպտական սփյուռքում:

Ղպտի եկեղեցու գլուխ կանգնած է պատրիարքը: Մինչև 2012 թ. մարտի 17-ը եկեղեցին գլխավորել է Շենուդա III-ը: 2012 թ. նոյեմբերի 4-ին նոր պատրիարք ընտրվեց 60-ամյա եպիսկոպոս Թեոդորոսը Բուհեյրա նահանգից: Նա դարձավ պատրիարք Թեոդորոս II:

Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցի

Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցի Եթովպիայի քրիստոնեական եկեղեցու պաշտոնական անվանումը,արևելյան հնագույն եկեղեցիներից մեկը: Հիմնվել է 1959 թվականին՝ բաժանվելով Ղպտի ուղղափառ եկեղեցուց: Եթովպիական ուղղափառ միաբնակ եկեղեցին՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, Ասորական ուղղափառ եկեղեցու, Ղպտի ուղղափառ եկեղեցու, Մալանկարա ուղղափառ ասորական եկեղեցու և Էրիթրեական ուղղափառ միաբնակ եկեղեցու հետ միասին կազմում է Արևելյան հնագույն եկեղեցիների ընտանիքը:

Քրիստոնեությունը Եթովպիա է մուտք գործել տակավին առաքյալների* ժամանակներից: Համաձայն Գործք առաքելոցի, Փիլիպպոս առաքյալը մկրտել է եթովպացիների Կանդակա թագուհու ներքինիին՝ դրանով նշանավորելով Եթովպական ուղղափառ եկեղեցու սկզբնավորումը: Քրիստոնեությունը պետականորեն ճանաչվել է 318 կամ 340-ին՝ Ալեքսանդրիայից եկած հույն բարեպաշտ վաճառական Ֆրումենտիոսի ջանքերով: Նորահաստատ եկեղեցու հոգևոր և վարչական պետքերը հոգալու նպատակով Աթանաս Ալեքսանդրացին նրան ձեռնադրել է (որից հետո նա վերանվանվել է Աբունա Սալամա) և ուղարկել այս նոր թեմին ծառայելու: Քաղկեդոնի ժողովից հետո Եթովպական ուղղափառ եկեղեցին, հավատարիմ մնալով երեք տիեզերական ժողովների դավանական որոշումներին, հարել է Ղպտի եկեղեցուն, որը ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի հետևորդ էր:

---

* առաքյալ- առաքված, ուղարկված: Առաքյալներ անվանվեցին Քրիստոսի 12 աշակերտները,որոնք ուղարկվեցին քարոզելու քրիստոնեությունը:

Բյուզանդական Հուստինիանոս կայսրի օրոք (527–565), երբ քաղկեդոնականներին հովանավորելու քաղաքականություն էր տարվում, ինչպես նաև ավելի ուշ՝ 640-ական թվականներից, երբ Եգիպտոսն ընկավ մահմեդական տիրապետության տակ, խզվեցին բյուզանդական եկեղեցու հետ բոլոր հարաբերությունները, և Եթովպական ուղղափառ եկեղեցին մայր՝ Ղպտի եկեղեցու հետ միասին անխաթար պահեց իր դավանական դիմագիծը:

Էրիթրեական ուղղափառ եկեղեցի

Էրիթրեական ուղղափառ միաբնակ եկեղեցի, Էրիթրեայի քրիստոնեական եկեղեցու պաշտոնական անվանումը, արևելյան հնագույն եկեղեցիներից մեկը: Հիմնվել է 1993 թվականին Էրիթրեայի անկախությունից հետո՝ բաժանվելով Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցուց: Էրիթրեական ուղղափառ միաբնակ եկեղեցին՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, Ասորական ուղղափառ եկեղեցու, Ղպտի ուղղափառ եկեղեցու, Մալանկարա ուղղափառ ասորական եկեղեցու և Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցու հետ միասին կազմում է Արևելյան հնագույն եկեղեցիների ընտանիքը: Կաթոլիկություն* , քրիստոնեության հիմնական ուղղություններից, հետևորդների թվով քրիստոնեության ամենախոշոր ճյուղը:Կաթոլիկությունը տարածված է և միլիոնավոր հետևորդներ ունի Եվրոպայում (հատկապես՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Ավստրիայում, Լեհաստանում), Լատինական և Կենտրոնական Ամերիկայում: Հետևորդներ ունի նաև Հյուսիսային Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում, Ավստրալիայում:

Կաթոլիկ եկեղեցի

Ձևավորվել է մ.թ. առաջին հազարամյակում նախկին Արևմտյան Հռոմեական կայսրության տարածքում: Կաթոլիկության սկզբնավորումը կարելի է տանել մինչև IV դար, երբ Հռոմի աթոռը, որի գլուխ կանգնած էր Հռոմի եպիսկոպոսը (պապ), իր իրավասությանը ենթարկեց Արևմուտքի եկեղեցիները՝ ձգտելով իր գերիշխանությունը տարածել նաև Արևելքում: Հռոմի աթոռը սկսում է իրեն բարձր դասել տիեզերական մյուս աթոռներից (Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ) և միջամտել Արևելքի եկեղեցական գործերին: Հակասություններն հետզհետե ավելի են սրվում VII–IX դդ.: Հռոմի նկրտումներն ավելի ցայտուն են դառնում IX դարից, երբ ձևավորվում է պապականությունը, նրա վարչական և գաղափարական հիմքերը: Հռոմը ստանում է նաև քաղաղաքական իշխանություն՝ 756 թվականին ստեղծելով կրոնապետություն՝ Պապական մարզը: Հռոմի պապերի

---

*Կաթոլիկություն- հունարեն՝ ընդհանրականություն, լատիներեն կաթոլիկ բառից, որը նշանակում է տիեզերական,ընդհանուր

նկրտումներն Արևելքի նկատմամբ հանդիպում են Կ. Պոլսի պատրիարքների (Փոտ, Նիկողայոս Միստիկոս, Միքայել Կերուլարիոս) հակազդեցությանը: 867 թվականին Հույն եկեղեցին խզում է իր կապերը Հռոմի եկեղեցուց: Այդ խզումը իր վերջնակետին է հասնում 1054 թվականին, երբ Հռոմն ու Կ. Պոլիսը փոխադարձաբար նզովում են միմյանց: Բաժանման դավանաբանական առիթը Արևմուտքի ընդունած «և Որդւոյ» վարդապետությունն էր, ըստ որի՝ Ս. Հոգին բխում է և Հորից և Որդուց: Երկաբնակությունն ընդունող քրիստոնեական եկեղեցին բաժանվում է արևմտյան կաթոլիկական և արևելյան երկաբնակ ուղղափառ (օրթոդոքս) ճյուղերի: Կաթոլիկությունը ձևավորվում է որպես դավանանք և եկեղեցական կազմակերպություն:

Հռոմի կաթոլիկ եկեղեցու գլուխը Հռոմի պապն* է, որի նստավայրը՝ Վատիկանը, որը 1929 թվականին ճանաչվեց որպես առանձին պետություն: VIII դ. կազմավորված Պապական մարզը մինչև 962 թվականը գտնվել է ֆրանսիական Կարոլինգների թագավորության, այնուհետև՝ Հռոմեական սրբազան կայսրության կազմում: XI դ. Կաթոլիկ եկեղեցին ընդարձակում և ամրապնդում է իր դիրքերը, Հռոմի աթոռն իրեն է ենթարկում Արևմուտքի բոլոր եկեղեցիները՝ հաստատելով Հռոմի պապի բացարձակ գերիշխանությունն ու հեղինակությունը հավատի և կրոնաեկեղեցական հարցերում, վճռորոշ դերակատարությունը քաղաքական խնդիրներում: XIII դ. Պապական մարզը դառնում է անկախ, իսկ 1274 թվականին պաշտոնապես ճանաչվում ինքնիշխան պետություն: Ֆրանսիական թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկը պապի աթոռանիստը Հռոմից տեղափոխում է Ավինյոն (1309–77): Այդ շրջանը պատմության մեջ հայտնի է պապերի «Ավինյոնյան գերություն» անունով: Հռոմի կաթոլիկ եկեղեցին, ձգտելով տիրանալ Սուրբ Հողին, XI–XIII դդ. նախաձեռնում է Խաչակրաց արշավանքներ, ստեղծում ասպետական օրդեններ (Հիվանդախնամների կամ Հյուրընկալների, Տաճարականների, Տևտոնական և այլն), կրոնական միաբանություններ (Ճիզվիտական, Դոմինիկյան, Ֆրանցիսկյան, Կարմելյան և այլն), Կաթոլիկ եկեղեցու հակառակորդներին, հերետիկոսներին, ազատամիտներին դարձի բերելու իսկ չուղղվողներին պատժելու համար XIII դ. ստեղծվում է ինկվիզիցիան(հավատաքննությունը), որը հետագայում պայքար է մղում բողոքականության դեմ:

Հռոմը նաև փորձել է ամենատարբեր եղանակներով կաթոլիկություն տարածել Հայաստանում, սկզբում՝ Կիլիկյան Հայաստանում՝ Հայ և Կաթոլիկ եկեղեցիների միություն հաստատելու միջոցով, ապա՝ XIV դ. սկզբից՝ բուն Հայաստանում՝ ունիթորության միջոցով: Դա հանգեցրել է Հռոմի կաթոլիկ եկեղեցուն միացած Արևելյան պատրիարքությունների և եկեղեցիների կազմավորմանը, որոնցից է նաև Հայ կաթողիկե եկեղեցին:

---

* Հռոմի պապ – կաթոլիկ եկեղեցիների հոգևոր և վարչական գերագույն առաջնորդը. Նստավայրը՝ Վատիկան:

XVI–XVIII դդ. Պապական մարզում հաստատվում է բացարձակապետություն, իսկ XIX դ. այն մտնում է միավորված Իտալական թագավորության մեջ և դադարում գոյություն ունենալուց:

Կաթոլիկ եկեղեցու ամբողջ համակարգը փոխվեց Վատիկանի II ժողովի ժամանակ: Այս ժողովի որոշումների համաձայն կարելի է ասել, որ պապական Հռոմի ամբողջ համակարգը գլխիվայր փոխվեց և ավելի արդիականացվեց: Դրա օրինակ է հրաժարումն այն բանից, որ ծառայությունն անպայման կատարվի լատիներեն լեզվով:

Կաթոլիկ եկեղեցին ավանդական մյուս եկեղեցիներից տարբերվում է դավանաբանական, վարդապետական, ծիսական, եկեղեցական կառավարման, կազմակերպա-կանոնական յուրահատկություններով: Ունի խիստ կենտրոնացված նվիրապետական կարգ: Կաթոլիկ եկեղեցու գլուխը Հռոմի պապն է, նրա իշխանությունը ավելի բարձր է, քան Տիեզերական ժողովի իշխանությունը (լրիվ տիտղոսն է՝ Հռոմի եպիսկոպոս, Հիսուս Քրիստոսի տեղապահ, առաքյալների իշխանի ժառանգորդ, տիեզերական եկեղեցու գերագույն պոնտիֆիկ, Արևմուտքի պատրիարք, Իտալիայի գահերեց եպիսկոպոս (պրիմաս), Հռոմ. գավառի արքեպիսկոպոս և մետրոպոլիտ, Վատիկան քաղաք-պետության միապետ, Աստծո ստրկաց ստրուկ): Համարվում է Պետրոս առաքյալի տեղապահ ժառանգորդը: Պապը կաթոլիկների կողմից ընկալվում է որպես Տիեզերական եկեղեցու գլուխ (մյուս եկեղեցիների համար Տիեզերական եկեղեցու գլուխն Աստված է). Քրիստոսն իր եկեղեցին որպես ժառանգություն փոխանցել է Պետրոս առաքյալին, նա էլ՝ իրեն հաջորդող Հռոմի եպիսկոպոսների (իմա՝ պապերին), ուստի պապը երկրի վրա Աստծո տեղապահն է և քրիստոնյա մյուս եկեղեցիների գլխավորը: Պապի ու Աստծո միտքը և կամքը մեկ են, նա եկեղեցու միապետն է և գերագույն դատավորը, ունի հրեշտակներից, սրբերից և տիեզերական ժողովներից բարձր իշխանություն, դավանաբանական հարցերում անսխալ է (ըստ 1869–70 թվականի Վատիկանի I ժողովի պապի անսխալականության դոգմայի): Պապին կից գործում է կուրիան (վարչական մարմինը) և կարդինալների Կոլեգիան, որի ամբողջությունը Կոնսիստորիան (ժողով) է: Պապի մահվան դեպքում նրա հաջորդին ընտրող արտակարգ ժողովը կոչվում է կոնկլավ (կողպված կամ դռնփակ սենյակ): Հավաքվում է պապի մահվանից հետո 11-րդ օրը և ընտրում պապ ձայների 2/3 մեծամասնությամբ ու ևս մեկ ձայնով՝ հավաքված կարդինալների թվից: Կա կարդինալների երեք աստիճան՝ կարդինալ-եպիսկոպոս, կարդինալ-քահանա և կարդինալ-սարկավագ: Կարդինալներն աշխատում են կոնգրեգացիաներում (սուրբ ժողովներում), որոնք վարչական և դատական մարմիններ են, ունեն իրենց գրասենյակները և վճռում են հավատի, դավանության, իրավունքի, բարոյականության, սրբադասման և այլ հարցեր: Մի շարք կարևոր կոնգրեգացիաներում նախագահում է անձամբ պապը: Հռոմից դուրս, մշտական կամ ժամանակավոր լիազորությամբ, գործում են պապի ներկայացուցիչներ՝ առաքելական փոխանորդներ, նվիրակներ, դիվանագիտական ներկայացուցիչներ

(լեգատ): Թեմական առաջնորդ-եպիսկոպոսներին օծում է միայն պապը: Նրանք կառավարում են պապին տված հնազանդության երդումով և իրենց աստիճանով ցածր են կարդինալներից: Պապը հրավիրում է Կաթոլիկ եկեղեցու «տիեզերական» ժողովներ, հղում էնցիկլիկներ (կոնդակներ): Կաթոլիկ եկեղեցուն հատուկ երևույթ են «զինվոր»-միաբանությունները, որոնց վանքերը ենթարկվում են հիմնականում Հռոմում նստող իրենց գլխավորներին (գեներալ): Վանականները ճգնակյաց չեն, կատարում են եկեղեց-հաս. պարտականություններ:

Բողոքական եկեղեցիներ

Բողոքականություն* , կաթոլիկության և ուղղափառության հետ միասին Քրիստոնեության երեք գլխավոր ճյուղերից մեկը: Բողոքականությունը սկիզբ առավ Ռեֆորմացիայի՝ հակակաթոլիկ շարժման հետևանքով Եվրոպայում, XVI դարում:

Բողոքականությունը առաջացել է Եվրոպայում XVI դարի առաջին կեսին որպես միջնադարյան Հռոմեա-կաթոլիկ եկեղեցու սահմանակարգների ժխտումը և դրանց ընդդիմակայություն Ռեֆորմացիայի ընթացքում, որի գաղափարախոսությունն էր վերադարձ առաքելական քրիստոնեությանը:

Ռեֆորմացիայի կողմնակիցների կարծիքով՝ Հռոմեա-կաթոլիկ եկեղեցին հեռացել է քրիստոնեական սկզբունքներից՝ միջնադարյան սխոլաստիկական աստվածաբանության և ծիսականության բազմաթիվ շերտավորումների հետևանքով:

Կրոնական հեղափոխության առաջնորդը դարձավ Մարտին Լյութերը: Նրա առաջին հանդեսը եկեղեցական քաղաքականության դեմ կայացել է 1517 թ.: Նա բացեբաց և զայրագին կերպով դատապարտեց ինդուլգենցիաների առքուվաճառքը, որից հետո եկեղեցու դռներին մեխեց 95 իր դիրքորոշում արտահայտվող թեզիսները: Բողոքական առաջին եկեղեցիներից է լյութերական, անգլիկան և վիկլիֆական եկեղեցիները:

Դասական աստվածաբանությունը կազմում է բողոքականության ինքնատիպ մի «ուղղափառություն» ու իր մեջ ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հավատքով մեղքերի թողության անհրաժեշտությունը, համընդհանուր սրբությունը, Աստվածաշնչի բացարձակ հեղինակությունը, մարդու բնածին մեղսավորությունն ու միայն Աստծո միջոցով փրկության հնարավորությունը:

---

* Բողոքականություն -լատիներեն՝ հանրության առջև ապացուցող

1. Աստվածաշունչը հանդիսանում է Աստծով ներշնչված ու Աստծո միակ ճշմարիտ խոսքը փոխանցող, քրիստոնեական ուսմունքի միակ աղբյուրը՝ պարզ ու ինքնամեկնաբանելի:
2. Ներում հնարավոր է ստանալ միայն հավատքով՝ անկախ բարի գործերից ու արարքներից:
3. Փրկությունը Աստծո շնորհն է, անարժան գթություն ու պարգև Աստծո կողմից՝ հանուն Հիսուսի, այլ ոչ ինչ-որ բան, ինչին արժանացել է մեղսագործը:
4. Քրիստոսը Աստծո ու մարդու միջև միակ միջնորդն է, փրկությունը հնարավոր է միայն Նրան հավատալու միջոցով:
5. Մարդը պետք է երկրպագի և պաշտի միայն Աստծուն, քանզի փրկությունը շնորհվում է միայն և միայն Նրա կամքի ու արարքների միջոցով՝ ոչ միայն խաչի վրա Հիսուսի Քավության միջոցով, այլև Քավության հավատքի շնորհը, որը ստեղծվել է Սուրբ Հոգու հավատացյալների սրտերում:
6. Յուրաքանչյուր հավատացյալ սկզբունքորեն իրավունք ունի վերլուծել ու մեկնաբանել Աստծո խոսքը:

Բողոքականության դասական աստվածաբանությունը շարադրված է Ռեֆորմացիայի հետևյալ դավանաբանական փաստաթղթերում՝ 1563 թվականինԳեյդելբերգյան Վարդապետություն (Գերմանիա), 1580 թվականին Գիրք Համաձայնության (Գերմանիա), 1618-1619 թվականներին Դորդրեխտյան սինոդի կանոններ (Դորդրեխտ, Նիդերլանդներ), 1643-1649 թվականներ Հավատքի վեսթմինստերյան խոստովանություն (Վեսթինիստերյան աբբայություն,Լոնդոն, Մեծ Բրիտանիա):

Բողոքական աստվածաբանության հիմնադիրներն են Մարտին Լյութերը, Ժան Կալվինը, Ու. Ցվինգլին, Ֆ. Մելանիտոն:

Օրթոդոքս եկեղեցիներ

Ուղղափառությունը քրիստոնեության մեջ՝ 1.Հիսուս Քրիստոսի առաքյալների հիմնած առաքելական, ավանդական և պատմական եկեղեցիների դավանանքի, վարդապետության ու կարգերի ամբողջությունը: «Ուղղափառություն» անվանումն առաջին անգամ հանդիպում է II դ. քրիստոնյա գրողների մոտ (Կղեմես Ալեքսանդրացի և ուր.), երբ ի հայտ են եկել քրիստ. եկեղեցու ուսմունքի առաջին բանաձևերը: Նշանակել է բոլոր եկեղեցիների հավատը՝ ի հակադրություն հերետիկոսների տարամիտության և աղավաղումների: Ուղղափառության սահմանները և սահմանումը միշտ եղել են վեճի առարկա: Սակայն Ուղղափառության հիմնական չափանիշ է ճանաչվում Հիսուս Քրիստոսի և նրա առաքյալների ուսմունքի անփոփոխ պահպանումը և անշեղորեն հետևելը, ինչպես շարադրված է Աստվածաշնչում, սրբազան ավանդությունում, Հավատո հանգանակում, Ընդհանրական եկեղեցու գումարած տիեզերական ժողովների բանաձևերում,եկեղեցու հայրերի ուսուցումներում: 451-ի Քաղկեդոնի ժողովի հետևանքով Ընդհանրական եկեղեցու պառակտումից հետո եկեղեցիները կամ եկեղեցիների ընտանիքները, ունենալով տիեզերական ժողովների և եկեղեցու հայրերի սեփական ցանկեր, տարակարծիք են Ուղղափառության բնորոշման, ինչպես նաև դավան. որոշ բանաձևերի Ուղղափառության հարցում:

Քրիստոնեական եկեղեցու հիմնական հավատալիքները, որոնք կազմում են նրա դավանանքը, բանաձևվել են երեք տիեզերական ժողովների (Նիկիայի Ա տիեզերական ժողով 325, Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողով 381, Եփեսոսի Գ տիեզերական ժողով 431) վճիռներով: Այն բոլոր եկեղեցիները, որոնք ընդունել են երեք տիեզեր. ժողովների հաստատած հավատամքը՝ Հոր և Որդու համագոյությունը, Սուրբ Հոգու Աստվածությունը, Ս. Երրորդության, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները, ս. Կույսի Աստվածածին կամ Աստվածամայր լինելը, ճանաչվում են ուղղափառ եկեղեցիներ:

2.Քրիստոնեության հիմնական երեք ուղղություններից (կաթոլիկության և բողոքականության հետ միասին) մեկը:Տվյալ դեպքում Ուղղափառությունը բնութագրում է տեղական ինքնավար, ազգային եկեղեցիների կամ արևելաքրիստոնեության երկու խոշոր ընտանիքներին՝ Արևելյան ուղղափառ եկեղեցիներ (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի, Ասորի ուղղափառ եկեղեցի, Եթովպական ուղղափառ եկեղեցի, Ղպտի ուղղափառ եկեղեցի, Հնդկաստանի Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցի) և Ուղղափառ (օրթոդոքս) կամ երկաբնակ (քաղկեդոնիկ) եկեղեցիներ: Վերջիններս կոչվում են նաև հունադավան, քանի որ ծագում են Հույն կամ բյուզ. եկեղեցուց (տես Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքություն), ունեն նույն եկեղեցական ավանդությունը, արարողակարգը և համանման կանոնական կառույցը: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներն այսօր իրենց մեջ պարփակում են ազգային ավանդություններ, լեզուներ և յուրահատկություններ: Սակայն նրանք բոլորն էլ ունեն միևնույն պատմական սկիզբը, այն է՝ բյուզանդական Ուղղափառ քրիստոնեությունը: Ընդհանրական եկեղեցական կազմակերպություն մեկ եկեղեց. կենտրոնով (ինչպես Վատիկանը Կաթոլիկ եկեղեցու համար) Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիները չունեն:

Հռոմեական կայսրության բաժանումից (395) հետո կայսրության եկեղեցին կազմակերպորեն տրոհվել է հռոմեական-արևմտյան և հունական-արևելյան մասերի: Քաղկեդոնի ժողովից հետո Հռոմի և Կ. Պոլսի աթոռները տարբերպատճառներով հակառակությունների, տարանջատումների, մրցակցության մեջ են եղել. 1054-ին Սուրբ Հոգու բխման վարդապետության մեջ « եւ Որդւոյ» (Filioque) հավելվածի (ըստ որի՝ Ս. Հոգին բխում է Հորից և Որդուց) ներմուծումը Հռոմի եկեղեցու կողմից՝հանգեցրել է երկու եկեղեցիների բաժանմանը և փոխադարձ նզովքների: Հռոմեական եկեղեցին կոչվել է կաթոլիկական, իսկ հունաբյուզանդական եկեղեցին՝ ուղղափառ: Խաչակիրների արշավանքն ավելի է խորացրել պառակտումը, քանի որ լատին եպիսկոպոսություններ են հիմնվել այնտեղ, որտեղ Հույն եկեղեցին ունեցել է իր պատրիարքական աթոռներն ու թեմերը: 1204-ին խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավումով՝ բաժանումը դարձել է վերջնական, իսկ հետագա դարերի միութենական փորձերը ոչ մի արդյունքի չեն հասցրել: Հռոմի պապի և Կ. Պոլսի պատրիարքի1054-ի փոխադարձ նզովքները վերացվել են 1964-ին՝ Հռոմի պապ Պողոս VI-ի և Կ. Պոլսի տիեզերական պատրիարք Աթենագորասի հանդիպման ժամանակ: IX–XI դդ-ից սկսած կազմավորվել են ինքնագլուխ (ավտոկեֆալ) երկաբնակ եկեղեցիներ (Վրաց եկեղեցին՝ ավելի վաղ), որոնք միավորվում են Ուղղափառ (Արևելյան երկաբնակ) եկեղեցիներ անվան տակ: Դրանք են՝ նախ՝ բյուզանդական շրջանի հին պատրիարքությունները՝ Կ. Պոլսի,Ալեքսանդրիայի, Անտիոքի (Դամասկոսում, Սիրիա), Երուսաղեմի աթոռները,

---

* ուղղափառություն- հունարեն օրթոդոքսիա՝ ուղիղ, ճշմարիտ հավատ, ուղիղ, ճիշտ փառք

ապա՝ Մոսկվայի (Ռուս Պրավոսլավ եկեղեցի), Սերբիայի, Բուլղարիայի, Ռումինիայի պատրիարքությունները, հուն. եկեղեցիները՝ Հելլադայի (Հունաստանի), Կիպրոսի, Սինայի, Վրաց, Ալբանիայի, Ֆինլանդիայի, Չեխիայի, Սլովակիայի, Լեհաստանի, Ճապոնիայի, ինչպես նաև Աֆրիկայի, ԱՄՆ-ի ուղղափառ եկեղեցիները: Դրանք բոլորն էլ առաջնորդվում են նույն նվիրապետետական աստիճանակարգով (եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ): Եկեղեցու աշխարհիկ դասը կազմում է նրա գործուն տարրը, համաձայն 1848-ի արլ. պատրիարքների հղած կոնդակի՝ «Եկեղեցու ամբողջական մարմնին է պատկանում նրա ճշմարտության պահպանումը»:Բոլոր Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեջ առաջնության պատիվը վայելում է Կ. Պոլսի տիեզերական պատրիարքությունը: Կ. Պոլսի գրավումից (1453) և Բյուզանդական կայսրության անկումից հետո մինչև 1917-ը Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեջ ղեկավար դեր է ունեցել Ռուս եկեղեցին:

Ուղղափառ ավանդության մեջ զատորոշվում են երեք կարևոր տարրեր՝ վարդապետական, ծիսական և հոգևոր ավանդությունները: 842-ին պատկերապաշտության վերջնական հաղթանակի առիթով, երբ բյուզ. Թեոդորա կայսրուհին (842–856) վերականգնել էսրբապատկերների պաշտամունքը, սահմանվել է «Ուղղափառության տոն» որն ամեն տարի քառասնօրյա պահքի առաջին կիրակին հանդիսավորությամբ տոնվում է որպես «ուղղափառության կիրակի» : Ուղղափառ երկաբնակ եկեղեցին պնդում է, որ քրիստ. հավատն իր ամբողջության մեջ ինքն է պահել և այդպիսով դարձել Մեկ, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական: Այդ պնդումը հիմնավորվում է Ուղղափառ դավանության մեջ, որտեղ եկեղեցին համարվում է «ճշմարտության սյուն և արմատ»: Տիրոջ մարմինը և Սուրբ Հոգին միասին հավիտենապես եկեղեցուն առաջնորդում են դեպի ճշմարտություն: Եկեղեցին անսխալականության միջոց չէ. նա անսխալական է իր ամբողջության մեջ, իր տիեզերական ըմբռնումով. նա չի ընդունում որևէ բան իբրև ճշմարտություն, եթե այն հակառակ է կամ հակասում է Սուրբ Հոգու առաջնորդությանը: Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ունի հավատի երկու աղբյուր՝ Աստվածաշունչը և սրբազան ավանդությունը, պայմանով, սակայն, որ ավանդության մեջ չլինի Ս. Գրքին հակասող որևէ բան:

Ուղղափառությունը հավատում է, որ Աստվածաշունչն արդյունք է երկնային ներշնչանքի իր ամբողջության մեջ և ոչ մեկին չի զրկում Աստվածաշունչը կարդալու և մեկնաբանելու իրավունքից, պայմանով, որ դա լինի եկեղեցու ավանդությանը համապատասխան և առաջնորդվի եկեղեցու ս. հայրերի մեկնություններով: Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ընդունում է յոթ ժողովների տիեզերականհեղինակությունը (325-ի Նիկիայի, 381-ի Կ. Պոլսի, 431-ի Եփեսոսի տիեզերաժողովները, ինչպես նաև՝ 451-ի Քաղկեդոնի, 553-ի Կ. Պոլսի, 680–681-ի Կ. Պոլսի, 787-ի Նիկիայի, 869–870-ի Կ. Պոլսի ժողովները) և նրանց վարդապետական սահմանումները: Ընդունում է եկեղեցու հայրերի (տարբերվում է Հայ առաքելական և Կաթոլիկ եկեղեցիների հայրերի ցանկերից) վկայությունը՝ իբրև ճշմարիտ մեկնիչներ, թարգմանողներ և եկեղեցու հավատի պահպանողներ: Ամենանշանավոր հայրերն են Աթանաս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Գրիգոր Նյուսացին, Կյուրեղ Ալեքսանդրացին, Հովհան Ոսկեբերանը, ինչպես նաև Մաքսիմոս Խոստովանողը (VII դ.), Հովհաննես Դամասկացին (VIII դ.), Գրիգոր Պալամասը (XIV դ.): Նրանց վկայությունները անսխալականության աղբյուր չեն: Եկեղեցու հայրերի գործերում Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին տեսնում է Ուղղափառության ընդհանուր ոգին, նրանց ամբողջական նվիրումը եկեղեցու վարդապետությանը՝ այդ աստվածաբանների գործերն ընդունելով իբրև օրինակելի

նմուշներ: Արևելաքրիստոնեական Ուղղափառությունը չի ընդունում Կաթոլիկ եկեղեցու «տիեզերական ժողովները» և նրանց վարդապետական որոշումները (Ս. Հոգու բխման վարդապետության մեջ « և Որդւոյ » հավելումը, Մարիամ Աստվածածնի մարմնով համբառնումը, Մարիամ Աստվածածնի անարատ հղությունը, պապի անսխալականությունը, քավարանը, հացի ու գինու գոյափոխությունը Պատարագի ժամանակ ևն): Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին գտնում է, որ եկեղեցական օրենքները ձևակերպվել են իր ընդունած յոթ տիեզերական ժողովների ընթացքում՝ եկեղեցու հայրերի կողմից: Այդ կանոնները կարգավորում են եկեղեցու կյանքը, բայց դրանք իրավական չափանիշներ չեն: Այդ օրենքներն ավելի շուտ նկարագրում և պաշտպանում են Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին, քան սահմանում այն:

Երկաբնակ ուղղափառների գլխավոր ժամերգությունը ս. Պատարագն է: Եկեղեցուհամար ամենակարևոր «արդիականացումը» ժողովրդի մասնակցությունն է Քրիստոսի փառավորյալ մարմնին՝ ս. Պատարագի ժամանակ, ինչպես երկնային թագավորության, որն այս աշխարհի համար դեռևս «գալիք թագավորությունն է» խորհրդանշում: Պաշտամունքի միջոցով եկեղեցին դառնում է «այն, ինչ որ էր», այսինքն՝ նոր ժողովուրդ Աստծո Սուրբ Հոգու ներգործությամբ: Հունադավան ուղղափառ ծիսական ավանդության մեջ զանազանվում են ընծայման՝ Մկրտության, ս. Մյուռոնի և Հաղորդության պատարագները, որոնք ամբողջապես և բարձրագույն ձևով իրականացնողը եկեղեցին է: Այդ պաշտամունքները սրբացնում են ժամանակը՝ օրվա ընթացքը, շաբաթվա օրերը և տարվա շրջանը: Հունադավան պաշտամունքները նկարագրված և բացատրված են մոտ երեք տասնյակ ծիսական գրքերում: Դրանցից ամենակարևորներն են՝ Ծիսարանը, որը բովանդակում է գրություններ ս. Պատարագի արարողությունների մասին և եկեղեցական խորհուրդները, Օկդոեխոս հոգևոր երգերի ժողովածուն (շաբաթվա շրջանի), տասներկու Մենայանները (տարեկան շրջանի) և երկու Տրիոդիաները (պահոց և Զատկական շրջանների): Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիների մեծ մասի օրացույցը կազմվում է հուլյան տոմարով: Քահանաները պետք է ամուսնացած լինեն (ընդ որում՝ մեկ անգամ):

Երկաբնակ ուղղափառ եկեղեցու վարդապետական և ծիսական ավանդույթները շեշտում են կյանքում կատարելությունը: Սրբերի հանդեպ պաշտամունքը հաստատվել է նրանց մասին եղած հավաստի փաստերով և որ Աստծո շնորհը ՝ բաշխված Քրիստոսի միջոցով, իր մեջ պարունակում է վերափոխելու և պայծառակերպելու զորություն: Դրանով մարդկային բնությունը Հիսուսի Մարդեղությամբ դառնում է կարողունակ՝ ընդունելու Ս. Հոգին և աստվածացումը (Թեոսիս): Հոգևոր հայրերը, սրբերը հավատի ուսուցիչներն են: Նրանք իրենց կյանքով ու գործով և հոգևոր փորձառությամբ սովորեցնում են մարդկանց ընդունել Ս. Հոգին: Հոգևոր փորձառություններ են ունեցել վաղ եկեղեցու անապատական ճգնավոր հայրերը՝ Անտոն Անապատականը,Պախոմիոսը և բյուզանդական միստիկները՝ Սիմեոն Երիտասարդը (XI դ.), Գրիգոր Պալամասը և XVIII–XIX դդ. Ռուս եկեղեցու սրբերն ու հոգևոր դաստիարակները՝ Տիխոն Զադոնսկին, Պայիսի Վելիչկովսկին, Սերաֆիմ Սարովսկին և ուր.: Հոգևոր ավանդություններին վերաբերող դասական տեքստերը հավաքված են «Ֆիլոգալիա» խորագրով գրքի հատորներում:

Հայոց մեջ հունադավան կամ քաղկեդոնիկ հայերը կոչվել են հոռոմներ և ծաթեր:

Եզրակացություն

Քրիստոսի երկու բնությունների վերաբերյալ Հայ եկեղեցու տեսության մասին խոսելիս սովորաբար մենք նկատի ենք ունենում 5-րդ դարի 2-րդ կեսից սկսած ժամանակահատվածը:Բազմաթիվ թերթերում մեր եկեղեցու Հայրերը շեշտել են,որ նրանք այդ դավանանքը ստացել են Ս. Գրիրոր Լուսավորչից և անփոփոխ պահել մինչև իրենց օրերը:

Ագաթանգեղոսի Հայոց պատմության մեջ ներմուծված «Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի» երկը իրավամբ համարվել է Հայ Եկեղեցու դավանաբանական աստվածաբանության առաջին ձեռնարկը:

Համաձայն նախաքաղկեդոնական շրջանի Հայ Եկեղեցու դավանաբանության աղբյուրների, Հիսուս Քրիստոսի մեջ միացել են աստվածային և մարդկային բնությունները, միացել են անբաժանելիորեն և անքակտելիորեն և այլևս չի կարելի խոսել երկու տարբեր բնությունների մասին, մի աստվածային բնության մասին:

451թ. Քաղկեդոնում հրավիրվում է ժողով, որի նախագահությունը հանձնում են Լևոն Բ պապի պատվիրակներին: Ժողովը, որը սկսվում է հոկտեմբերին, տեղի տալով Հռոմի պահանջներին, իբրև դավանության հիմք ընդունում է Լևոն պապի Տումարը, դատապարտում Նեստորին ու Եվտիքեսին և իբրև հավատի ամփոփում ընդունում «Մի Քրիստոս յերկուս բնութիւնս» բանաձևը:

Այսպիսով Հռոմի Աթոռը և Քաղկեդոնի ժողովը, պայքարելով Եվտիքեսի մոլորության դեմ, հանգում են մեկ այլ ծայրահեղության՝ եկեղեցական ավանդությունից հեռացող մի նոր վարդապետության: Քաղկեդոն ժողովի որոշումները լուրջ ընդդիմություն են առաջ բերում Կիպրոսի, Պաղեստինի, Կապադովկիայի, Եգիպտոսի ինչպես նաև Սիրիայի Եկեղեցիներում: Բազմաթիվ ժողովներում մերժվում է Քաղկեդոնի ժողովի դավանաբանական բանաձևումը:

Հայաստանի Եկեղեցին, զբաղված լինելով պարսկական զրադաշտական կրոնի դեմ օրհասական կռիվ մղելով, չէր կարողացել օր-օրի հետևել Բյուզանդական կայսրության մեջ ծավալված դավանաբանական վիճաբանություններին և դիրք ճշտել: Երբ Վահան Մամիկոնյանի մարզպետության օրերին Հայաստանն ու Հայոց Եկեղեցին սկսեցին մի փոքր շունչ քաշել , Քրիստոնեական Եկեղեցին բաժանված էր երեք մասի՝ երեք դավանանքներով: Պարսկաստանում իշխում էր նեստորականությունը, Հռոմում և Արևմուտքում ընդհանրապես՝ քաղկեդոնականությունը, իսկ Բյուզանդիայում՝ միաբնակությունը՝ Հենոտիկոնի տրամադրություններով:

5-րդ դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսրերը ստիպված էին միջամտել Քաղկեդոնի խնդրին՝փորձելով հաշտեցնել դավանաբանական տարբեր ուղղությունների Կողմնակիցներին: 482թ. բյուզանդական կայսեր օրոք ընդունված հրովարտակը փաստորեն դատապարտում է Քաղկեդոնի ընդունած երկաբնակ վարդապետությունը և պաշտպանում միավորյալ մեկ բնություն բանաձևը:

Քաղկեդոնի որոշումների այսպիսի մեկնաբանությունը միանգամայն ընդունելի էր հայերի համար, ինչը և իր արտահայտությունն է գտնում Դվինի առաջին եկեղեցական ժողովի որոշումներում: 506թ. Բաբկեն Ա կաթողիկոսը(490-516թթ) Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որին մասնակցում էին նաև վրաց և աղվանից եկեղեցիները, հայոց մարզպան Վարդ Մամիկոնյանը և այլ նախարարներ:

Ժողովի մասնակիցները քննարկում են նեստորականության խնդիրը քանի որ պարսից պետության հովանավորության շնորհիվ այն մեծ տարածում էր ստացել Պարսկաստանում և սկսել էր թափանցել նաև Հայաստան: Ժողովը դատապարտում է նեստորական ուսմունքը:

Հայոց Եկեղեցին առաջին անգամ հստակորեն արտահայտում է իր դիքորոշումը՝ մերժելով նեստորականությամբ քողարկված 451թ.-ի Քաղկեդոնի ժողովի ուսմունքը:

6-րդ դարի երկրորդ տասնամյակից սկսած բյուզանդական կայսրերը որդեգրում են այլ քաղաքականություն. այժմ նրանց հիմնական նպատակն էր բռնի ուժով Քակեդոնի ժողովի որոշումներն ընդունելի դարձնել Արևելյան եկեղեցիների կյանքում:

Ներսես Բ կաթողիկոսը (548-557թթ.) 554թ. ին գումարում է Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը, որը այլ հարցերի թվում քննարկում է նաև նեստորականների հարցը: Ժողովի որոշմամբ Մանաճիհրի վանքը քանդվում է, իսկ նեստորականները վտարվում են Հայաստանից:

Դվինի երկրորդ ժողովի որոշումներով հայությունը վերջնականապես հաստատում էր իր ազգային-եկեղեցական ինքնորոշումը՝ Հայոց եկեղեցու դավանանքը լավագույնս արտահայտելով նույն ժողովի Հավատո հանգանակում:

Հայոց եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները (Նիկիա-325թ.,Կոստանդնուպոլիս-381թ.,Եփեսոս-431թ.):Օրթոդոքս եկեղեցին ընդունում է միայն առաջին յոթ տիեզերական ժողովների որոշումները (գումարած՝Քաղկեդոնի-451թ.,Կ.Պոլսի 2-րդ –553թ.,Կ. Պոլսի 111-680թ.,Նիկիայի 2-րդ-787թ. ժողովները):Իսկ կաթոլիկ եկեղեցին ընդունում է բոլոր 22,իրենց կողմից «տիեզերական» կոչվող ժողովների որոշումները (վերջինը՝Վատիկանի 22-րդ ժողովն է՝1962-1965 թթ.):

Հայոց եկեղեցում քահանայից մինչև կաթողիկոս ոչ միայն ձեռնադրվում են,այլև օծվում: Օրթոդոքս եկեղեցում միայն ձեռնադրվում են ,իսկ միջին դարերից սկսած կաթոլիկ եկեղեցում ևս կատարվում է օծում:

Հայոց եկեղեցում պատարագը մատուցվում է միայն մեկ խորանի վրա՝մեկ քահանայի կողմից,իսկ կաթոլիկ եկեղեցում որքան խորան կա,այնքան քահանաներ միաժամանակ կարող են պատարագ մատուցել:

Պատարագի համար Հայոց եկեղեցին օգտագործում է բաղարջ(անթթխմոր) հաց և անապակ գինի:Կաթոլիկ եկեղեցին բաղարջ հացով է պատարագում,սակայն գինու մեջ խառնում է մի քանի կաթիլ ջուր:Օրթոդոքս եկեղեցին թթխմորով պատրաստած հացով և գինուն ջուր խառնած է պատարագում:

Հայոց եկեղեցին Հիսուս Քրիստոսի Ծնունդյան և Մկրտության տոները հաստատուն կերպով նշում է հունվարի 6-ին,կաթոլիկները Ծնունդը տոնում են

դեկտեմբերի 25-ին,իսկ Մկրտությունը՝հունվարի 6-ին:Օրթոդոքսները Ծնունդը տոնում են հունվարի 7-ին,իսկ Մկրտությունը՝ հունվարի 19-ին:

Կաթոլիկ եկեղեցում բոլոր հոգևորականները կուսակրոն են,իսկ Հայոց և օրթոդոքս եկեղեցիներում կան նաև ամուսնացած հոգևորականներ:

Կաթոլիկ եկեղեցում Հռոմի պապն ընտրվում է կարդինալների կողմից,առանց ժողովրդի մասնակցության:Հայոց եկեղեցում աշխարհիկ ներկայացուցիչները նույնպես մասնակցում են կաթողիկոսի ընտրությանը:

Հայոց եկեղեցում մկրտությունը ընկղմամբ է կատարվում,իսկ մկրտությունից անմիջապես հետո մկրտող քահանայի կողմից կատարվում է դրոշմի խորհուրդը: Կթոլիկների մոտ մկրտությունը քահանան կատարում է ջուր ցանելով,իսկ դրոշմի խորհուրդը կատարում է եպիսկոպոսը մանկան 8-12 տարեկան դառնալու ժամանակ:

Հայերն ու կաթոլիկները միանման են խաչակնքում,իսկ օրթոդոքսները աջից ձախ են տանում ձեռքը:

Կաթոլիկ եկեղեցու նվիրապետության մեջ գոյություն ունի կարդինալություն: Կարդինալի աստիճան տրվում է ոչ միայն եպիսկոպոսներին,այլ նաև սարկավագներին և քահանաներին:Հայոց և օրթոդոքս եկեղեցիները չունեն նման աստիճան:

Այսպիսով Հայոց եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներն ու կանոնները, քանի որ դրանցում ամբողջացան Հավատո հանգանակի, այսինքն՝ քրիստոնեական դավանանքի(հավատքի) հիմնական դրույթները:

Այսպիսով Քրիստոնեական եկեղեցու համար մեծ նշանակություն են ունեցել առաջին երեք տիեզերական ժողովները:Դրանք տեղի են ունեցել Նիկեա(325թ.), Կ.Պոլիս(381թ.) և Եփեսոս(431թ.) քաղաքներում:Այդ տիեզերական ժողովների որոշումները պարտադիր էին բոլոր եկեղեցիների համար:Ժամանակի ընթացքում քրիստոնեական եկեղեցու մեջ տեղի ունեցան բաժանումներ, ձևավորվեցին տարբեր ուղղություններ:

387թ. Մեծ Հայքի թագավորությունը միմյանց միջև բաժանելուց հետո Բյուզանդյան և Սասանյան Պարսկաստանն ամեն կերպ ձգտում էին սահմանափակել հայ իշխանների իրավունքները:Քրիստոնյա Բյուզանդիան ձուլողական քաղաքականություն վարելիս հետ չեր մնում Սասանյան Պարսկաստանից:Այդ քաղաքականությունը ավելի հետևողական դարձավ 451թ-ից հետո, երբ Կ. Պոլսի մոտ գտնվող Քաղկեդոն քաղաքում տեղի է ունենում քրիստոնեական եկեղեցու 4-րդ տիեզերական ժողովը:Դավանաբանական սուր վեճեր են ծավալվում Հիսուս Քրիստոսի բնության հարցի շուրջը:Հույն հոգևորականությունը հարում է այն ուղղությանը, ըստ որի Հիսուս Քրիստոսն ունեցել է երկու բնություն, այսինքն՝ նա միաժամակ թե՛ Աստված և թե՛ մարդ:Քաղկեդոնի ժողովի հետևորդներին հետագայում կոչում են երկաբնակներ կամ քաղկեդոնականներ:Հայաստանում այդ ժամանակ ծավալած հակապարսկական ապստամբության պատճառով հայ հոգևորականները չեն մասնակցում Քաղկեդոնի ժողովին:Հետագայում, երբ

բյուզանդացիները փորձում են հայերին պարտադրել Քաղկեդոնի ժողովի որոշումները, Հայոց եկեղեցին վճռականորեն մերժում է այդ պահանջները:

506թ.-ին Դվինում հրավիրվում է եկեղեցական ժողով, որին մասնակցում էին նաև վրացի ու աղվան եպիսկոպոսներ:Հավաքված հոգևորականները հրաժարվում են ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները:Այդ պատճառով էլ հայերին անվանել են հակաքաղկեդոնականներ կամ միաբնակներ:

Դվինի 554թ՝ երկրոդ եկեղեցական ժողովը հավատարիմ է մնում հայ հոգևորականության հետևողական դիրքորոշմանը:Ժողովը պաշտոնապես ընդունում է հայկական տոմարը(օրացույցը) և իր որոշումներով ամրապնդում Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը:

Այսպիսով՝ նոր և կարևոր քայլ է կատարվում Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի դարձնելու ճանապարհին:

Դվինի երկրորդ ժողովի որոշումներով հայությունը վեջնականապես հաստատում է իր ազգային-եկեղեցական ինքնորոշումը՝ Հայոց եկեղեցու դավանանքը լավագույնս արտահայտելով նույն ժողովի Հավատո հանգանակում:

Քաղկեդոնի ժողովը եկեղեցու պառակտման պատճառ դարձավ:Այն չեն ընդունում Ալեքսանդրիայի դպրոցը և նրա ավանդությանը հարազատ մի շարք եկեղեցիներ, այդ թվում՝ Հայոց եկեղեցին:Դարեր շարունակ կայսրերի եկեղեցական քաղաքականությունը և եկեղեցու ներքին հարաբերությունները պտտվում էին հարցի շուրջ՝ ընդունել Քաղկեդոնի ժողովը թե ոչ:Հարազատ մնալով ալեքսանդրյան դպրոցի ավանդությանը՝ արևելյան վարդապետները զգուշանում էին քաղկեդոնական ձևակերպման վտանգներից:Արևելյան վարդապետությոան քրիստոսաբանական կառույցը շատ պարզ է:Քրիստոսը կատարյալ Աստված է և կատարյալ Մարդ: Աստվածությունը և մարդեղությունը(մարդկայնությունը) անփոխարինելի, անշփոթելի և անբաժանելի կերպով միացած են մի բնության մեջ: Արևելյան աստվածաբանությունը մերժում է ցանկացած բաժանություն և երկվություն Քրիսոսի մեջ:Մի է Քրիստոս՝ մարմնացյալ Բանը.մի աստվածամարդկային բնություն, մի անձ, մի դեմք, մի կամք, մի ներգործություն:

Քիրստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը տեղի է ունեցել 1054թ-ին, երբ քաղկեդոնական ուղղությունը բաժանվում է երկու մասի, և առաջանում են բյուզանդական օրթոդոքս ու լատին եկեղեցիները:

Քրիստոնեական եկեղեցական հիմանական ուղղություններն են՝ արևելյան ուղղափառ, օրթոդոքս, բյուզանդական, կաթոլիկ և բողոքական:

«Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Միավորվի՛ր և կենսագործի՛ր այն քո սրտի բաբախմամբ, որը համահունչ է տիեզերական զարգացման օրենքին:Քո փրկությունը կարող են իրագործել որդիք, որոնց դու կտեսնես ու կվստահես քո սրտի ձայնով և հոգու կանչով:Քո հոգու մեջ առաջացրու անհրաժեշտությունը իմաստության միջոցով վկայված քո ուղղուն և կազմակերպի՛ր «Հայոց Բնի» ձևավորումը, վստահի՛ր նրան այն համոզմամբ, որ քո ուժը անկասելի է և քո էությունը հավերժ ու անպարտելի:

Քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները

1. Արևելյան ուղղափառ (ոչ քաղքեդոնական) եկեղեցիներ
   Ա) Հայոց եկեղեցի
   Բ)Ղպտի(եգիպտական) եկեղեցի
   Գ)Ասորի Ուղղափառ եկեղեցի
   Դ)Եթովպական Ուղղափառ եկեղեցի
   Ե)Հնդկաստանի Սբ. Թովմայի (մալակարա) Ուղղափառ եկեղեցի
2. Օրթոդոքս եկեղեցիներ
3. Կաթոլիկ եկեղեցի
4. Բողոքական եկեղեցիներ

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Բուն բովանդակություն---------- 4

Հայ առաքելական եկեղեցի---------- 4

Ասորական ուղղաջառ եկեղեցի---------- 11

Ղպտի (եգիպտական) եկեղեցի----------13

Եթովպական ուղղափառ միաբնակ եկեղեցի---------- 13

Էրիթրեական ուղղափառ եկեղեցի---------- 14

Կաթոլիկ եկեղեցի---------- 14

Բողոքական եկեղեցիներ---------- 17

Օրթոդոքս եկեղեցիներ---------- 18

Եզրակացություն---------- 22

Գրականություն

1. Հայ եկեղեցու պատմություն
   ՄԱՍՆ-Ա,(Սկզբից մինչև 1441թ)
   Աշխատասիրությամբ՝ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի
   Ս. Էջմիածին-1998թ.

2. «Քրիստոնյա Հայաստան»
   Հանրագիտարան
   Երևան-2002թ.

3. Հայկական սովետական հանրագիտարան

4. Օրմանեան Մաղաքիա,Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, արարողութիւնը, գրականութիւն, ու ներկայ կացութիւնը
   Կ. Պոլիս-1911թ.

5. Օրմանեան Մաղաքեա արքեպիսկոպոս,
   Օրմանեան Ազգապատում-հատոր Ա,
   Օրմանեան Ազգապատում-հատոր Բ,
   Օրմանեան Ազգապատում-հատոր Գ

6. Մեսրոպ քահանա Արամյանի Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրվագծեր(Դ-Ը դդ.),«Գանձասար» աստվածաբանական հանդես Բ.
   Երևան-1992թ.